

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

01.01.2011 - 30.12.2011

2011թ-ի դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ Բերդկունք գյուղական համայնքի ղեկավարի կողմից ` 2011թ. ընթացքում կատարած աշխատանքների և ծրագրերի վերաբերյալ տարեկան ամփոփիչ ժողով, որին մասնակցում էին համայնքի ավագանու անդամները և համայնքի բնակիչներ:

Համայնքի ղեկավարը նշեց , որ չնայած գյուղացին գտնվում է սոցիալապես անապահով վիճակում, բայց այնուամենայնիվ կարողացանք հավաքագրել հողի հարկը 75% գույքահարկը 92 % և հողի վարձավճարը 40%: Նշեց նաև, որ գյուղացին իր խնդիրները մենակ լուծել չի կարող, անհրաժեշտ է պետության աջակցությունը:

Համայնքը վերջին մի քանի տարիների ընթացքում մարզպետարանի կողմից չի ստացել աջակցություն և չի կարողացել համայնքում իրականացնել որևէ գյուղանպաստ ծրագիր:

Համայնքի ղեկավարը նշեց նաև այն փաստը, որ համայնքի հարկերի հավաքագրմանը խանգարում է նաև գույքահարկի բազայում գտնվող այնպիսի ավտոմեքենաների և շինությունների առկայությունը, որոնք իրականում գոյություն չունեն ,որոնց համար հարկ է հաշվարկվում բազայում: Իրականում մեզ անհրաժեշտ է պետական կադաստրի օգնությունը, որպեսզի հողի և գույքի հարկի բազայում տեղ գտած անճշտությունները շտկվեն և մարդիկ կատարեն իրենց հարկային պարտավորությունները: Կան հողեր ,որոնք սխալմամբ գրված են ուրիշների անվամբ ,որն էլ դառնում է վեճի առարկա և խանգարում է հարկի հավաքագրմանը:

Պատվիրվել է համայնքի գլխավոր հատակագիծը, որի աշխատանքները կատարվում են:

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ԵՎԱՍՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ 01.12.2011թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ**

| ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
|-----------------|-------------------------|--------|---------|------------|
| Տողի h/h | Եկամուտները | Պլան | Փաստացի | Կատարման % |
| 1 | Ընդամենը եկամուտներ | 6432.0 | 5478.6 | 85.2 |
| 2 | որից սեփական եկամուտներ | 2932.0 | 1978.6 | 67.5 |
| 3 | այդ թվում հողի հարկ | 1882.0 | 1397.9 | 74.3 |
| 4 | Գույքահարկ | 350.0 | 322.0 | 92.0 |
| 5 | Հողի վարձավճար / արոտ | 700.0 | 258.7 | 36.9 |
| 6 | Դոտացիա | 3500.0 | 3500.0 | 100 |
| Տողի h/h | Ծախսերը | Պլան | Փաստացի | Կատարման % |
| 1 | Ընդամենը ծախսեր | 4892.0 | 4524.9 | 92.5 |

| | | | | | |
|---------------------|------------------------|---------------------|-------------|----------------|-----------------------|
| 2 | 4111 | աշխատավարձ | 4000.0 | 3960.0 | 99.0 |
| 3 | 4112 | պարգևատրում | 330.0 | 330.0 | 100 |
| 4 | 4221 | էլ.էներգիա | 312.0 | 41.9 | 13.4 |
| 5 | 4234 | տեղեկատվական ծառ. | 10.0 | 10.0 | 100 |
| 6 | 4261 | գրասենյակային ծախս. | 100.0 | 43.0 | 43 |
| 7 | 4729 | սոց. օգնություն | 140.0 | 140.0 | 100 |
| Տողի h/h | Ֆոնդային բյուջե | | Պլան | Փաստացի | Կատարման % |
| 1 | 5133 | քարտեզագրման ծախս. | 1115.0 | 1115.0 | 100 |
| | | | | | |
| | | | | | |